ՄՐՑՈՒՅԹ

PALO ALTO ՀՐԵՊԱՏԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հայտարարում է PALO ALTO հրեպատի Հավելված 1-ում նշված արտոնագրերի ձեռք բերման բաց մրցույթ: Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձինք, որոնք հանդիսանում են PaloAlto ընկերության գրանցված գործընկեր ՀՀ տարածքում և ունեն PaloAlto-ի կողմից արտադրողի հավաստագրման թերթիկ (Manufacturer Autorization Form):

Մրցութային փաթեթները պարտադիր պետք է պարունակեն՝

- Մրցույթի առարկայի գինը՝ ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ,
- վճարման պայմանները, մատակարարման ժամկետները
- երաշխիքային սպասարկման պայմանները և ժամանակահատվածը:

Մրցույթի մասնակիցների կողմից ներկայացվող առաջարկի գործողության ժամկետը պետք է լինի առաջարկների ուղարկման օրվանից սկսած 15 օրից ոչ պակաս:

Սույն մրցույթ հայտարարողը իրավունք ունի մինչև առաջարկների ամփոփելը ցանկացած պահի դադարեցնել մրցույթի անցկացումը և հրաժարվել բոլոր ստացած հայտերից՝ առանց որևէ պարզաբանման և չկրելով որևէ պատասխանատվություն մասնակիցների առջև:

Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ք. Երևան, Մ.Խորենացու փողոց 15շենք, 8-րդ հարկ («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն)՝ փակ ծրարով:

Մրցույթի մասնակիցները կարող են ստանալ Լոտի տեխնիկական նկարագրերի նվազագույն պահանջները ք. Երևան, Խորենացի 15, Էլիտ Պլազա Բիզնես կենտրոն, 8- րդ հարկում: Լոտերի տեխնիկական նկարագիրը կտրամադրվի այն կազմակերպությունների ներկայացուցիչներին (համապատասխան լիազորագրի առկայության դեպքում), որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետությունում PaloAlto ընկերության պաշտոնական ներկայացուցիչ՝ ինչի մասին հավաստող փաստաթուղթը մրցույթին մասնակցել ցանկացող անձը մրցույթին մասնակցելու մտադրության մասին համապատասխան գրության հետ պետք է ներկայացնի arca@arca.am հասցեով: Մինչև տեխնիկական նկարագրի տրամադրումը մրցույթի

մասնակիցը պետք է «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի հետ կնքի «Չբացահայտման համաձայնագիր», որի նախագիծը նախօրոք կտրամադրվի մասնակցին: Այնուհետև մասնակցի լիազորված անձը (համապատասխան լիազորագրի առկայության դեպքում) կարող է ներկայացնել վավերացված «Չբացահայտման համաձայնագիրը» և ստանալ մրցութային լոտերի տեխնիկական նկարագիրը: Մրցույթի մասնակիցները կարող են ներկայացնել ավելի բարձր տեխնիկական բնութագրերով առաջարկներ, ինչը կդիտվի որպես առավելություն:

Մրցութային առաջարկների ներկայացման վերջնական ժամկետն է 29.07.2024թ.-ը՝ ժամը 17.00-ն ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել tender@arca.am հասցեով: